

ԳԱԽԱՌԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Ճառ Դ. ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆԻ)

Ժողովրդի մը հոգուն հայելին գրականությունն է: Անոր մէջ կը ցոլան անցեալը, մտքի եւ սրտի բոլոր շարժումներով, եւ ապագայ երազները, իտեալները: Գրականությունը ժողովրդի մը գոյութեան – ինքնորոյն գոյութեան – ոսկեղէն սիւնն է: Սա ան ուժն է որ շարժման մէջ կը դնէ մեր գոյութեան, գործունեութեան զսպանակները: Գիտությունը եթէ մտածել կուտայ, զգայական աշխարհ է որ կը մղէ: Մէկը մեքենան է, միւսը ոգին:

Յեղի հոգին սերտելու համար անոր գրականությունը պէտք է քրքրել: Հայ ազգը լեզու մը, մեղրամոմի պէս լեզու մը ունի որ ընդունակ կ'ընէ զինքը մտքի ամէն ձեւերը արտայայտելու: Մեր գրաբար լեզուն արուեստի տեսակէտով հիանալի է, մեր ոսկեդարու գրականությունը ոչ մէկ տեսակէտով վար չմնար ուրիշ մեծ ազգերու գրականութենէն, իբրեւ լեզուի կերտուածք: Զարմանալի չէ որ օտարները հայ Աստուածաշունչը «բոլոր թարգմանություններու թագուհին» կոչած են⁹:

Սակայն հին լեզուի արտայայտութեան ձեւը անցեալին կը պատկանի. անկէ ի վեր մեր լեզուն պատմական եւ աշխարհագրական զանազան ազդակներու բերումով, բնաշրջուած է, կերպարանափոխուած է: Բայց այդ կերպարանափոխությունը առերեւոյթ է: Մեր գրաբար լեզուն պատմականօրէն մեռած է իբր քերականութիւն. բայց իր տարրերը գրեթէ նոյնութեամբ – բացառաբար կարգ մը աղաւաղուած ու հինցած բառերու – անցած են աշխարհաբարի մէջ: Այսօրուայ մեր աշխարհիկ լեզուի բառերը մեծ մասով շարունակությունն են հինի: Եթէ կան որ չենք գործածեր, մեծ մասով պատճառը ան է որ չենք ուսումնասիրած:

Գրաբար լեզուէն զատ մեր ներկայ աշխարհաբարի ամէնէն կենսունակ աղբիւրը մեր «գրոց բրոցն է»,